ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«28» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000093

Ձեռնարկողը՝ ***«Ասֆալտագործ» ՍՊԸ***
ք. Երևան, Շիրակի փողոց թիվ 47/12

Գործունեությունը՝ ***Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000093

<<28>> 10 2020թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջան, Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Ասֆալտագործ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Քաղաք Երևան Շենգավիթ վարչական շրջան,
Շիրակի փողոց թիվ 47/12

Ըստ նախագծի ավտոգազալիցքավորման ճնշակայանի (ԱԳԼՃԿ) կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել քաղաք Երևանի Շենգավիթ վարչական շրջանի, Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում՝ «Ասֆալտագործ» ՍՊԸ-ի կողմից:
Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 5196.16մ² ընդհանուր մակերեսով տարածքում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի ա) ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում «Ասֆալտագործ» ՍՊ ընկերությանը պատկանող տարածքում նախատեսված է կառուցել հասարակական սպասարկման օբյեկտ, որը բաղկացած է, սեղմված բնական գազով ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշակային կայանից (ԱԳԼՃԿ), իր սպասարկող շինություններից, շանթարգելներից, հակահրդեհային հիդրանտներից: Ավտոմեքենաների գազալցման ճնշակային կայանը մեկուսացված է բնակելի զանգվածից շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: Սեղման բնական գազով ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշումային կայանը (ԱԳԼՃԿ) բաղկացած է կոմպրեսորային մոդուլից, տեխնիկական շինությունից, գազակուտակիչ ստորգետնյա տարողությունից, օպերատորային շինությունից, ավտոմեքենաների գազալցակետից, հակահրդեհային հիդրանտներից:

Նախատեսվող գործունեության տարածքում և մերձակայքում պատմամշակութային, բնության հուշարձաններ, հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Գազակուտակիչ տարողությունն իրենից ներկայացնում է 4.00x6.00մ առանցքային չափերով, 300մմ հաստությամբ միաձույլ ե/բ պատերով ուղղանկյունաձև ստորգետնյա շինություն, որի ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից: Բնական գազի գազալցակետային ռամպան 5.00x36.0մ միջսյունային չափերով թեթև ծածկով, բարձրությունը՝-4.50մ շինություն է: Կոմպրեսորային մոդուլը 7.00x15.00մ առանցքային չափերով արտադրատեխնոլոգիական մեկ հարկանի մասնաշենք է՝ 4.00մ բարձրությամբ, պատերը 400մմ հաստությամբ: Ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից: Օպերատորային շինությունները 6.00x6.00մ+6.00x3.40մ և 6.00x8.00մ առանցքային չափերով ծառայողական մեկ հարկանի շինություններ են, բարձրությունը՝ 2.70մ, 400մմ հաստությամբ պատերով , ե/բ անցքավոր սալերից և ե/բ միաձույլ ծածկով: Սպասարկող շինություն է՝ մեկ հարկանի, 6.00x21.00մ առանցքային չափերով, 400մմ հաստությամբ պատերով: Տեխսպասարկման շինությունը 8.00x18.00մ առանցքային չափերով շինություն է՝ մեկ հարկանի, 400մմ հաստությամբ պատերով: Նախատեսվում է նաև ճայնային

և լուսային ազդանշանային համակարգերի տեղադրում, հողանցման համակարգի իրականացում:

Միջբլոկային և միջկոնտեյներային հաղորդակցուղիները մտնում են գործարանային արտադրական սարքավորումների կազմի մեջ և տեղադրվում են համաձայն սարքավորումների հետ ստացվող նախագծերի: Հակահրդեհային նպատակների համար նախատեսվում է 3 հատ ՇՊ-Բ տիպի հակահրդեհային վահանակ, 3 հատ ՕՊ-100 տիպի փոշային կրակմարիչ , 15 հատ փրփրային կրակմարիչ և 15 հատ 1.5 x1.5մ չափի ասբեստայիմն ծածկոց: Գազալցակետի հեռավորությունը ճանապարհից նախատեսվում է 15 մետրից ոչ պակաս: Գազալցակայանի հեռավորությունը բնակելի և արտադրական շինություններից ըստ նախատեսված գործող նորմերի:

Գազի արտադրատեխնոլոգիական շինությունների հեռավորությունը օպերատորային շինությունից նախատեսված է 9մ-ից ոչ պակաս: Գազալցակետի հեռավորությունը գազակուտակիչ ստորգետնյա տարողությունից և կոմպրեսորային մոդուլից ըստ գործող նորմերի:

Նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի ջրամատակարարումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից՝ համաձայն կնքված պայմանագրի, ջրի միացումը տրված է գործող F=100մմ ջրատարին՝ համաձայն կնքված պայմանագրի: Ջուրն օգտագործվելու է կենցաղային և կոմպրեսորների համակարգի հովացման նպատակով: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար, անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարապահ ծավալ՝ 50մ^3 տարողությամբ: Տարածքում կոյուղու ցանցը բացակայում է: Կայանում կառաջանան միայն կենցաղային կեղտաջրեր, որի համար կնախատեսվի անջրթափանց հոր 40մ^3 ծավալով:

Համաձայն հայտի, հայցվող տարածքում բերրի հողաշերտը բացակայում է: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային և շինարարական աղբի տեսքով: Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ և ետլիցք՝ 650մ^3: Աղբահանությունը կատարվելու է պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում ավտոգազալցաճնշակայանի գազամատակարարումն իրականացվելու է «Երևան ԳԲԿ 4»-ը սնող (Dպ-100) կողմնատար-գազատարից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է ԱԳԼՃԿ-ի 748մ մակերեսով տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ անցուղիներ, սիզամարգեր:

ասֆալտապատ երթևեկելի գոտիներ: Ոռոգման նպատակով ջուրը կբերվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, թափոնների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանում,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- մոտակա տարածքում գտնվող ջրի աղբյուրի ուղղությամբ ցանկապատի տեղադրում, շինարարական աղբի կուտակում շինարարության փուլում ջրային ռեսուրսն աղտոտումից պահպանելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի սպասարկում և կարգաբերում շինհրապարակից դուրս՝ Երևան քաղաքի տեխսպասարկման կայաններում,
- շինարարական նյութերի և քսայուղերի պահեստավորումը կատարվում է բետոնապատ մակերեսների վրա՝ յուղերի տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և շինարարությանն առնչվող նորմերի պահպանում և այլն:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունը ապահովելու համար շինսարքավորումները շահագործվելու են ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են քաղաքաշինության ու անշարժ գույքի կադաստրի կոմիտեները, շրջակա միջավայրի նախարարությունն և ընդերքի տեսչական մարմինը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա

միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները: Հայտի լրամշակման ընթացքում հաշվի են առնվել ստացված դիտողություններն և առաջարկություններն:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց անհնարինության դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել ՀՀՇՆIV-11.05.02-99 շիննորմերի և 2005 թ. դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N2399-Ն և 2008թ. օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1101-Ն ՀՀ կառավարության որոշումներով և 2014թ. հոկտեմբերի 14-ի, «Քաղաքաշինություն. քաղաքների և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» հոդվածով հաստատված ՀՀ Քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանով և ապահովել «Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում սանհանգույցներին առաջադրված պահանջները և շինարարական նորմերը» և դրանց հիման վրա հայտով նախատեսված լուծումները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ասֆալտագործ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 47/12 նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցելու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի

վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան